

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

_____ 2018 թվականի N _____ Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N
411-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 411-Ա որոշման 2-րդ կետի՝

- 1) 1-ին ենթակետում «երկամսյա» բառը փոխարինել «վեցամսյա» բառով.
- 2) 2-րդ ենթակետում «քառամսյա» բառը փոխարինել «յոթամսյա» բառով:

Տեղեկանք-հիմնավորում

Համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 411-Ա որոշման՝ Երևան քաղաքի Քանաքեռ ՀԷԿ 23 հասցեում գտնվող անշարժ գույքը պետք է հետ վերցվի «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ից և անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացվի «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Հաշվի առնելով, որ 2017 թվականի մայիսի 18-ի Կրթության և գիտության նախարարի հ. 556-Ա/2 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների օպտիմալացման (խոշորացման) վերաբերյալ առաջարկություններում ընդգրկված «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի մասով օպտիմալացման գործընթացը ընդհատվել էր (ուսումնարանը դեռ գործում է նույն մասնաշենքերում) և ներկայումս քննարկվում է այն վերսկսելու հարցը ուստի սույն որոշման նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի կատարել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 411-Ա որոշման հանձնարարականները:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 411-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 411-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների անհրաժեշտությունը չի առաջացնի:

Ամփոփաթերթ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 411-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ նախարարություններից ստացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Պետական գույքի կառավարման կոմիտե 05.03.2018թ. հ.01/22.2/1566-18	Առաջարկություններ և առարկություններ չկան:		
Ֆինանսների նախարարություն 10.08.2018թ. հ. 01/9-5/14490-18	Առաջարկություններ և առարկություններ չկան:		